**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «Լիլանարմ» ՍՊԸ-ի միջև 28.03.2025թ. կնքված «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին հատկացված ք.Երևան, Ռոստոմի փողոց 30, շինություն 243 հասցեում գտնվող տարածքի վերանորոգում» ծրագրի աշխատանքների կատարման թիվ ՀՏԶՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

**ք. Երևան** «25» 04 **2025 թ.**

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի,** ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Լիլանարմ» ՍՊԸ-ն** ի դեմս **տնօրեն Նարեկ Պողոյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու) մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, **հաշվի առնելով** այն հանգամանքը, որ համաձայն ՀՏԶՀ ԾԻՎՎ պետ Է. Իվանյանի, ՇԱՎԲ պետ Ֆ.Սարգսյանի, վերահսկող ինժեներ Ն.Մարգարյանի ս.թ. ապրիլի 25-ի զեկուցագրի՝ տարածքի վերանորոգման ընթացքում առաջացել են որոշ ծավալային փոփոխություններ և հիմք ընդունելով Կողմերի միջև **28.03.2025թ. կնքված «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին հատկացված ք.Երևան, Ռոստոմի փողոց 30, շինություն 243 հասցեում գտնվող տարածքի վերանորոգում»** ծրագրի աշխատանքների պետական գնման **NՀՏԶՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1** ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) **5.1-րդ, և 8.5-րդ** կետերի դրույթները՝

**կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.**

1. Պայմանագրի 5-րդ՝ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ» բաժնի 5.1. կետի առաջին պարբերությունը փոփոխել՝ շարադրելով այն հետևյալ խմբագրությամբ.
   «Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 61,728,610 (վաթսունմեկ միլիոն յոթ հարյուր քսանութ հազար վեց հարյուր տասը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»:
2. Պայմանագրի Հավելված 1-ում կատարել փոփոխություններ համապատասխան տողերի մասով, համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ի, որի արդյունքում պայմանագրի ընդհանուր գինը կավելանա 344,570 (երեք հարյուր քառասունչորս հազար հինգ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամով և կկազմի 61,728,610 (վաթսունմեկ միլիոն յոթ հարյուր քսանութ հազար վեց հարյուր տասը) ՀՀ դրամ:
3. Պայմանագրի Հավելված 3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված 2-ի:
4. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:
5. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

6. Համաձայնագիրը կազմված է 5 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ**
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
Հ/Հ՝ 900011056562
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն՝
**Ս. Բաղինյան**

/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**«ԼԻԼԱՆԱՐՄ»**
**ՍՊԸ**
Հացե՝ ՀՀ, ք.Երևան, Նուբարաշեն 12փ.,
2 4, բն. 6
ՀՎՀՀ՝0043[illegible]589
Հ/հ՝ 220613330[illegible]51000
Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Տնօրեն՝
**Ն. Պողոյան**

/ստորագրություն/

Հավելված 1
**23.03.2025թ.** կնքված
**ՀՏԶՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1** ծածկագրով
աշխատանքների գնման պայմանագրի
«_25_» _04_ 2025թ.
կնքված Համաձայնագիր _1_ -ի

«Հավելված N 1
**23.03.2025թ.** կնքված
**ՀՏԶՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1** ծածկագրով
աշխատանքների գնման պայմանագրի»

**Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնինհատկացված ք.Երևան, Ռոստովի փ.30 շինության 243 հասցեում գտնվող տարածքի վերանորգման**

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ –ՆԱԽԱՀԱՇԻՎ

| N | Նկարագրություն | Միավոր | Եղած ծավալ | Առաջարկվող ծավալը | Տարբերություն | Միավորի արժեք | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ավելացվող ծավալներ | | | | | | | |
| **10** | **Ավելացվող աշխատանքներ** | | | | | | |
| 1 | Ապակիների թաղաթապատում | մ2 | 0.00 | 135.00 | 135.00 | 4500 | 607500 |
| 2 | Գոյություն ունեցող վիտրաժների վրա պատուհանների բացում | մ2 | 0.00 | 5.33 | 5.33 | 135000 | 719550 |
| 3 | Պղնձե հաղորդալար 3x2,5 մմ | գմ | 0.00 | 520.00 | 520.00 | 526 | 273520 |
| | | | | Ընդամենը ավելացվող ծավալներ | | | **1600570** |
| | | | | | | | |
| Հանվող ծավալներ | | | | | | | |
| **5** | **Այլ աշխատանքներ** | | | | | | |
| 4 | Օդափոխության արտածման ճաղաշար 150x150 | հատ | 20.00 | 10.00 | -10.00 | 4352 | -43515 |
| 5 | Կանալային օդամղիչ 100 Վտ հզորությամբ 220 Վ /ներառյալ գոֆրա խողովակ/ | կ-տ | 20.00 | 10.00 | -10.00 | 25125 | -251252 |
| **8** | **Ներքին էլեկտրալուսավորության ցանց** | | | | | | |
| 2 | Լուսադիոդային (LED) լուսատու 35-40վտ հզոր. 3400-3600լմ լուսային հոսքով, 3900-4000կ գունային ջերմաստիճանով, | լրակազմ | 230.00 | 160.00 | -70.00 | 14552 | -1018661 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | IP20-23 պաշտպանվածության աստիճանով: /կամ համարժեք/ | | | | | | |
| | | | | Ընդամենը հանվող ծավալներ | | | -1313428 |
| | | | | | | | |
| | | | | Ընդամենը փոփոխություն | | | 287142 |
| | | | | ԱԱՀ | | | 57428 |
| | | | | Ընդամենը փոփոխություն | | | 344570 |
| | | | | | | | |
| | | | | Սկզբնական արժեք | | | 61384040 |
| | | | | Ներկա արժեք | | | 61384040 |
| | | | | Առաջարկվող արժեք | | | 61728610 |
| | | | | Հարաբերություն % | | | 101 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ**
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
Հ/Հ՝ 900011056562
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն՝
**Ս. Բաղինյան**

/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**«ԼԻԼԱՆԱՐՄ»**
**ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Նուբարաշեն 12փ.,
2 4, բն. 3
ՀՎՀՀ՝00433589
Հ/հ՝ 220613330251000
Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Տնօրեն
**Ն.Պողոսյան**

/ստորագրություն/

Հավելված 2
**28.03.2025թ.** կնքված
ՀՏԶՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1 ծածկագրով
աշխատանքների գնման պայմանագրի
«25» 04 2025թ.
կնքված Համաձայնագիր 1 -ի

«Հավելված N 3
**28.03.2025թ.** կնքված
ՀՏԶՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1 ծածկագրով
աշխատանքների գնման պայմանագրի»

**«Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին հատկացված ք.Երևան, Ռոստոմի փողոց 30, շինություն 243 հասցեում գտնվող տարածքի վերանորոգում»**
ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45461100/1 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ | - | - | - | 61,728,610 | 61,728,610 | 61,728,610 | 61,728,610 | 61,728,610 | 61,728,610 | 61,728,610 | 61,728,610 | 61,728,610 | 61,728,610 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվու*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ**
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
Հ/Հ՝ 900011056562
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն՝
**Ս. Բաղինյան**

/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**«ԼԻԼԱՆԱՐՄ»**
**ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Նուբարաշեն 12փ.,
2 4, բն 6
ՀՎՀՀ՝00433589
Հ/հ՝ 2206133З0251000
Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Տնօրեն՝
**Ն. Պողոսյան**

/ստորագրություն/

ՀՏԶՀ-ի գործադիր տնօրեն՝
Պարոն Մ. Բաղինյանին

Զեկուցագիր

«Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին հատկացված ք.Երևան, Ռոստովի փ.30 շինության 243 հասցեում գտնվող տարածքի վերանորգում» (կոդ ՀՏԶՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1) ծրագրի վերաբերյալ

Հայտնում ենք Ձեզ, որ կապալառու կազմակերպություն՝ «Լիլանարմ» ՍՊԸ-ն 23.04.2025 թ.-ի գրությունով դիմել է ՀՏԶՀ-ին, որ «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին հատկացված ք.Երևան, Ռոստովի փ.30 շինության 243 հասցեում գտնվող տարածքի վերանորգում» ծրագրի շինարարական աշխատանքների ժամանակ առաջացել են որոշ ծավալային փոփոխություններ: 23.04.2025 թվականին ՀՏԶՀ-ին է ներկայացվել փաստացի չափագրումները, որը իրականացրել է կապալառուն (արդյունքները կցվում են): ՀՏԶՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի ծավալաթերթում փոփոխվել են՝

- Ավելացել են՝ ապակիների թաղաթապատման, գոյություն ունեցող վիտրաժների վրա պատուհանների բացման և մալուխի որոշ ծավալներ:
- Պակասել են՝ կանալային օդամղիչ, լույսեր և այլ աշխատանքների որոշ ծավալներ:

Վերը թվարկված հանգամանքներից ելնելով կազմվել է ՀՏԶՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվի փոփոխության առաջարկ: Ծրագրի ներկա արժեքը կազմում է 61,384,040 դրամ, համաձայն նախահաշվի փոփոխության առաջարկի ծրագրի արժեքը արժեքը աճել է 344,570 դրամով և կազմում է 61,728,610 դրամ, ծրագրի նախնական արժեքը ավելացել է 0.56%:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին կնքել նոր համաձայնագիր և կատարել պայմանագրի փոփոխություն:

Կից ներկայացվում են՝

1. Նախահաշվի փոփոխության առաջարկ:
2. Կապալառու կազմակերպության գրություն պատճեն:

ԾԻՆՎՎ պետ ............................................ Է. Իվանյան

ՇԱՎԲ պետ ............................................ Ֆ. Սարգսյան

Վերահսկող ինժեներ ............................................ Ն. Մարգարյան

25.04.2025թ.

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին հատկացված ք.Երևան, Ռոստոմի փողոց 30, շինություն 243 հասցեում գտնվող տարածքի վերանորոգում» աշխատանքների նպատակով կազմակերպված N ՀՏԶՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 28.03.2024թ. կնքված N ՀՏԶՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1 պայմանագրում 25.04.2025թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող` երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ` | Ծավալային փոփոխությունների հիմքի առկայություն |
| Փոփոխության նկարագրություն` | Ծավալային փոփոխություններ |
| Փոփոխության հիմնավորում` | Պայմանագրի 5.1, 8.5 կետերը |

**Պատվիրատու` Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ**

## ОБЪЯВЛЕНИЕ
**об изменениях, внесенных в заключенный договор**

Армянский фонд территориального развития ниже представляет краткую информацию об изменениях, внесенных 25.04.2025 года в договор N ՀՏԶՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1 заключенный 28.03.2025 года в результате процедуры закупки под кодом ՀՏԶՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1 организованной с целью приобретения Строительных работ для своих нужд, и копию утвержденного в двухстороннем порядке документа, содержащего внесенное изменение.

| | |
|---|---|
| Причина возникновения изменения: | Наличие основы для изменения объема |
| Описание изменения: | Изменение объема |
| Обоснование изменения: | Пункт 5.1, 8.5 договора |

**Заказчик: Армянский фонд территориального развития**